ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 2-ին, չորեքշաբթի.- Ժ. օր Յինանց:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Մալթայի ինքնիշխան մարտական ուխտի դեսպան Անդրե Գուտսվիլերին:

Մայիսի 4-ին, հինգշաբթի.- ԺԲ. օր Յինանց:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հանս-Ուլրիխ Քլոզեի գլխավորած պատվիրակությանը՝ Հայաստանում Գերմանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆոլկեր Զայթցի ուղեկցությամբ:

Նույն օրը Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի հուշարձանների պահպանության միջազգային կազմակերպության անկախ փորձագետ Ալկիվիադես Պրեպիսին:

Մայիսի 7-ին, կիրակի.- Գ. կիր. Աշխարհամատրան (Նաևաչ Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ Սրբազան Հայրը քարոզ խոսեց՝ «Ամենայն հաւատացեալքն էին ի միասին, եւ ունէին զամենայն ինչ հասարակաց» (Գործք Բ 44) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 11-ին, հինգշաբթի.- ԺԹ. օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց World Vision միջազգային քրիստոնեական կազմակարպության նախագահ Դին Հըրշի գլխավորած պատվիրակությունը՝ կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն Ռոբերտ Դիրայի ուղեկցությամբ:

Մայիսի 14-ին, կիրակի.- Դ. կիր. (Կաթոմիր Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Արիւն մարտիրոսաց հիմն եկեղեցւոյ» (Օգոստինոս) բնաբանով:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 19-ին, ուրբաթ.- ԻԷ. օր Յինանց:

Այսօր Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Էջմիածնի թիվ 2 երաժշտական դպրոց՝ մասնակցելու և իր օրհնությունը տալու դպրոցի շենքում համակարգչային կենտրոնի բացմանը: Նորաբաց կենտրոնը գործելու է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի հովանու ներքո:

Մայիսի 21-ին, կիրակի.- Ե. կիր.: Տօն Երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը քարոզ խոսեց՝ «Ի յերկնից երեւեալ նշանն յաղթութեան այսօր հեթանոսաց ծագեաց լոյսն ողորմութեան» (Շարական) բնաբանով (տե՛ս էջ 49):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 27-ին, շաբաթ.- ԼԵ. օր Յինանց:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին բերվեց հայ մեծ զորավար Դրաստամատ Կանայանի աճյունը:

Իջման Ս. Սեղանի առջև, հանդիսապետությամբ Ն.U.O.S.S. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն: Ներկա էին նաև ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, կառավարության անդամներ, մեծ զորավարի ազգականները, բազմաթիվ հավատացյալներ:

Ս. Էջմիածինը հրաժեշտ տվեց իր նվիրյալ զավակին՝ ճանապարհելով դեպի Ապարան, ուր և իր վերջին հանգրվանը գտավ զորավարի աճյունը:

Մայիսի 28-ին, կիրակի.- Զ. կիր.:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի միաբան Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը քարոզ խոսեց՝ «Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ» (Հովհ. Թ 50) բնաբանով (տե՛ս էջ 52):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մայիսի 29-ին, երկուշաբթի.- ԼԷ. օր Յիսուսից:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ECLOF-Հայաստան աշխատանքային սեմինարի մասնակիցները՝ Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսին սեմինարի ծրագիրը ներկայացնելու և Վեհափառ Հայրապետի օրհնությունը ստանալու նպատակով:

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագի նախագահի տեղակալ տիկ. Անկե Ֆուքսի գլխավորած պատվիրակությանը: